

փազանց վտանգաւոր հարեան է, որովհետեւ ձգտում է տիրապետել Հայաստանը և առհասարակ ճնշել Տաճկաստանին:

Սակայն այստեղ էլ գերմանական ձեռնարկութիւնը մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ Տաճկաստանին, որովհետեւ չինելիք երկաթուղիների ցանցը պիտի բարձրացնէ նրա տնտեսական ոյժը և անհրաժեշտ դէպքում արագ կերպով պիտի փոխադրէ տաճկական զօրքն ու ռազմամթերքները դէպի սահմանը, դէպի պատերազմ ընդդէմ կաղակներին:

Հեղինակի կարծիքով Տաճկաստանն այդ բարիքները հետտնութեամբ կը կարողանայ վայելել, եթէ Փոքր-Ասիայում գերմանական գաղութներ հաստատուեն:

Ընդհանուր առմամբ պ. Շնայդերի աշխատութիւնն արժանի է ուշադրութեան իր մի քանի հետաքրքիր տեղեկութիւններով, որոնք աւելի մեծ արժէք կ'ունենային, եթէ հեղինակի քարոզչական տօնն ու աղաւաղումները չը լինէին...

Ե. ԹՈՓՉԵԱՆ

Ս Պ Ա Ռ ՈՒ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

Ընթերցողը չի դարմանալ արդեօք, եթէ ասենք, որ այժմս հայերէն պիտանի դրքերի սով է: Ամբողջ տարի է բոլորում, իսկ մեր աղքատիկ գրականութեան վրայ չեն աւելանում երեք կարգին գիրք, մինչդեռ՝ դրա փոխարէն, եղած չէնք ու չնորհով գրքերն էլ «մնաս բարեաւ» ասելով՝ այլ ևս չեն կենդանանում վերստին տպագրութեամբ:

Ներկայումս մեր մի քանի յայտնի հեղինակների գրուածները հրապարակի վրայ ծախու չունինք բոլորովին. դրանք սպառուած են թէ հեղինակների մօտ և թէ գրաւիճառանոցներում: Փաստերին դիմենք. Բաֆֆու «Սամուէլ», «Կայծեր», «Իււիթ բէկ», «Փունջ», «Ոսկի աքաղաղ», «Ղարաբաղի աստղագէտ», «Արծիւ Վասպուրականի», «Հայ կինը և հայ երիտասարդութիւնը» վէպերը սպառուած են. հատնելու վրայ են «Խենթ և Զալալեղ-դին», «Խամսայի մնիւքութիւններ», «Վէպիկներ և պատկերներ», «Պաշտօնագրի յիշատակարան», «Մինն այսպէս, միւսն այնպէս» գրուածները: Պոստեանցի «Հացի խնդիր», «Սօս և Վարդիթեր», «Շահէն» գրքերը շատ տարիներ է ինչ սպառուած են: Սմբատ Շահազիզեանի «Լոռնի վիշտը», «Հրապարակախօս ձայնը», «Ա-

մասնային նամակները՝ նմանապէս։ Ռ. Պատկանեանի առանձին լոյս տեսած «Բանաստեղծութիւններ»-ը Մոսկուայում՝ հանգուցեալի որդու մօտ կայ, իսկ գրավաճառների մօտ երկու տարուց աւելի է ինչ վերջացել է։ Շիրվանզադէի «Արամբին», «Գործակատարի յիշատակարան»-ը, «Մնամատար», «Յաւագար» նոյնպէս չը կան։ Թարգմանութիւններից սպառուել են «Դոն-Քիշոտ», «Ռոբիզոն», «Պաւարից դէպի լոյս», «Գէորգ Ռոլլեստոն», «Վաշինգտոն», «Բենիամին Ֆրանկլին» գրքերը։ Ատրպետի «Ալմաստ»-ը և Պետերբուրգի ուսանողների թարգմանական «Լուսադէմին» և «Ուսկոկներ» գրքերը նորերս սպառուեցին։ Յովհ. Յովհաննիսեանի և Ա. Իսահակեանի «Բանաստեղծութիւններ»-ը նոյնպէս չը կան։ «Ռուսերէնից հայերէն բառարան»՝ խօ, դեղի համար չէ ձաւուռ։ Երեցփոխեանի «Ռուս-հայերէն բառարան»-ը 5—6 տարուց աւելի է, իսկ Աբիս. Յովհաննիսեանի «Ռուս-հայերէն բառարան»-ը երկու տարի է, որ սպառուել են։

Թերեւս մի կերպ տանելի լինէր,—եթէ գոնէ ուշադրութեան արժանի նոր գրքեր լոյս տեսնէին ու սպառուածների տեղը բռնէին։ Թէև իւրաքանչիւր գրուածք իր համն ու հոտն ունի, բայց որ ոչ նորերն են երևան գալիս և ոչ էլ հներն են արտասուում,—ահա այս տխուր պարագան կարօտ է մեր հասարակութեան բանիբուն մասի լուրջ ուշադրութեան։

Հայերէն գրքերի պահանջ թէև թույլ, բայց կայ իսկապէս։

1900 թուականի ընթացքում Թիֆլիսի յայտնի մի գրավաճառանոցին դիմել են «Սամուէլ» վէպի համար 176 հոգի, «Կապեր»-ի համար 153 հոգի, «Դաւիթ բէկ»-ի՝ 147, «Փունջ»-ի՝ 73, «Ոսկի աքաղաղ»-ի՝ 62, «Հայ կին և հայ երիտասարդութիւն»-ի՝ 43, «Հայի ինդիր»-ի՝ 92, «Շահէն»-ի՝ 78, «Սօս և Վարդիթեր»-ի՝ 75, «Լեոնի վիշտ»-ի՝ 52, «Հրապարակախօս ձայն»-ի՝ 26, «Ամառնային նամակներ»-ի՝ 25, Գամառ-Քաթիպայի «Բանաստեղծութիւններ»-ի՝ 218, Շիրվանզադէի սպառուած վէպերի համար դիմել են 25—62 հոգի, Յ. Յովհաննիսեանի և Ա. Իսահակեանի «Բանաստեղծութիւններ»-ի՝ 35, վերի յիշած սպառուած թարգմանական գրուածներին՝ 33—116։ Իսկ Երեցփոխեանի և Աբիս. Յովհաննիսեանի բառարանների համար, համարեա, ամենայն օր։ Բերած թուերը դեռ մի գրավաճառանոցինն են, և այն էլ նկատի ունեցէք, որ շատերը հաստատապէս գիտենալով որ այդ գրքերը հրապարակի վրայ չը կան, սպառուած են, հետևաբար չեն էլ դիմել։ Իսկ եթէ գրքերը լինէին, անկասկած գրապահանջների թիւը կը կրկնապատկուէր և աւելի։ Պարզ է ուրեմն որ պիտանի գրքերի համար մշտական պահանջ կայ յիրաւի։

Պահանջներ եղել են աւելի Սուխումի երջանից, որի հայ բնակիչները տաճկաստանցիներ են, Կովկասից դուրս Ռուսաստանի և Ամերիկայի հայ զաղութներից: Ի դէպ՝ այս էլ պէտք է ասել—ընդհանրապէս դիտուած է, որ Տաճկաստանի վաճառական, առհեստուր և մեակ հայ դասակարգերի մէջ աւելի թուով գրաճանաչ և ընթերցասէրներ կան, քան Ռուսաստանի և Պարսկաստանի համապատասխան դասակարգերում: Կովկասի քաղաքներում պահանջներ եղել են բաւարար չափով: Արարանի, Ղազարի, Նախիջևանի գիւղորայքը և Արարատեան դաշտի բնակիչները դեռ խարխափում են նախնական տգիտութեան մէջ: Գրասիրութիւն տարածելու բարոյական պարտականութիւնը ծանրանում է աւելի քահանաների և երիտասարդների վրայ, որոնց անմիջական պարտքն է մայրենի լեզուի ընթերցանութիւնը հացի և ջրի չափով ընտանեցնել մատաղ սերնդի բերաններում:

Մեր հեղինակների մեծ մասը միջոցներ չունեն նորից հրատարակելու իրենց սպասուած գրքերը: Պէտք է նրանց օգնեն մեր ունեւորները:

Բայց մեր հարուստները աւելի մեծ ուրախութեամբ անմիտ չռայութիւններ լրայ հազարներ կը վատեն, քան մի քանի հարիւր կը դնեն և հրատարակիչ-մեկենասներ կը դառնան:

Մեր հարուստին շատ հարկաւորն է, թէ հայերէն գրքերը սպառւում են և տարիներով չեն տպւում նորերը...

Մի հանգամանքի վրայ ևս կը ցանկալինք մատնանիչ անել:

Պէտք է խնդրել հրատարակողներից, որ կարելուցն չափ աշխատեն մատչելի գներ նշանակել գրքերի վրայ: Շատերը փափագում են ունենալ հանգուցեալ Րաֆֆու գրութեանը, բայց լինչպէս վճարեն 4 ռ. «Վէպիկներ և պատկերներ» գրքի համար, 3 ռ. 50 կ. «Սամուէլ» գրութեան համար, կամ 7 ռ. Աբիս. Յովհաննիսեանի Ռուս-հայերէն երկհատոր բառարանի համար, մինչդեռ Մակարովի Ռուս-Փրանսերէն միջակ գիրքով բառարանը նոյն ստուարութեամբ արժէ միայն 2 ռուբլի. թող Ռուս-հայերէն բառարանը 1 ռուբլով աւելի լինի, ուրեմն 3 ռ. արժենայ, բայց ոչ 7 ռ.:

Տաճկահայոց մէջ տպուող գրքերի մասին ոչինչ չենք կարող ասել, քանի որ յարմարութիւններ չը կան մօտից ծանօթանալու Իսկ Պարսկաստանի հայերը դեռ տնաս են տպագրութեան, հրատարակութեան մասին մտածելու: Թաւրիզում, Թեհրանում և Նոր-Ջուղայում եղած հայոց տպարանները կատարեալ անգործունէութեան մէջ մոռացուած են:

Տեսնենք հիմա մի ամբողջ տարում հրատարակուած հայ-

երէն գրքերի ստատիստիկան ինչ նորութիւն է հաղորդում մեզ:

1900 թուականի ընթացքում լոյս են տեսել 52 գիրք, որից 7-ը (3-ը Հրատարակչական Ընկերութեանը, 4-ը մասնաւոր անձանց) նախորդ տարիներումն են տպուել, իսկ այս տարի արտատպուել են միայն. հետեաբար հաշուի չը պէտք է առնել: Ասել է թէ՛ մի ամբողջ տարուայ մէջ 45 գիրք է միայն աւելացել մեր գրականութեան վրայ: Այդ 45 թուից 14 գիրք Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնն է լոյս ընծայել: Հրատարակչական Ընկերութեան 14 գրքից 10-ը թարգմանութիւն են և 4-ը ինքնուրոյն գրուած: Միւս 31 գիրքը մասնաւոր անհատներ են հրատարակել, որից 21-ը ինքնուրոյն են, 4-ը թարգմանական:

Վերև յիշուած 45 կտոր գրքերը ըստ բովանդակութեան հետեւեալ դասակարգութիւնն ունին.—9 գիրք գիտական-ժողովրդական գրութեանն են, 5-ը կենսագրական, 5-ը մանկական, 4-ը թատերական, 3-ը կրօնական, 3-ը դասագիրք աշակերտների համար, 3-ը բժշկական, 3-ը վիպական, 3-ը երգարան, 2-ը ճանապարհորդական, 1-ը պատմական պօէմա, 1-ը գիւղատնտեսական, 1-ը առակագիրք, 1-ը նշանագրեր ձեռագործի համար, 1-ը զուարճախօսութիւն՝ գաւառաբարբառով գրուած:

Հրատարակուած այդ գրքերի մեծամասնութիւնն ութածալ կամ քառածալ բարակ բրօշիւրներ են՝ բաղկացած 35—62 երեսներից, բացի Արիս. եպս. Սեդրակեանի «Քահանայական խնդիր», եր. Շահաղիզի «Մկրտիչ Յովսէփեան Էմին», Կ. Կուսիկեանի և Լ. Սարգսեանի «Մայրենի խօսք» դասագիրքը, Կ. Յիւլիանի «Ուրանիա» աստղագիտական վէպը՝ Հ. Առաքէլեանի թարգմանութեամբ, Նորայր Բիւզանդացու լուսաբանած «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնը» համեմատական գրութեան և Պ. Վինոգրադովի «Դասագիրք ընդհանուր պատմութեան Նոր-Դար» թարգմանութիւն Նիկ. Քարամեանի:

Զուր չէր ասուած յօդուածիս առաջին տողերում, թէ ամբողջ տարի է բոլորում, բայց մեր աղքատիկ գրականութեան մէջ չեն աւելանում երեք կարգին գիրք:

Արդարև՝ տխուր պատկեր է ներկայացնում հրատարակչական գործը մեզանում: Ո՞ր մի գրականութիւն սիրող անհատի սիրտը տակն ու վրայ չի լինի, կարդալով վերանիչ սղմուած թուերը: Անցնի 366 օր և ընդամենն 45 գիրք արտագրուի...

Ընթերցանութեան գրքերից պակաս հոգս չէ պատճառում նաև դասագրքերի պակասութիւնը:

Վերջին տարիներս զգալի կերպով նկատուում է հայերէն դասագրերի պակասութիւն։ Նոր դասագրեր չեն յօրինուում, սակաւթիւ եղածներն էլ պակասում են միմեանց յետեից՝ չարժանաւորով նոր տպագրութիւնների։ Մի քանի առարկաների համար դասագիր չը կայ բառիս բովանդակ նշանակութեամբ։ Հապա՝ մատնացոյց արեք ներկայումս հրապարակի վրայ՝ Եկեղեցական պատմութեան, Բնական գիտութեանց, Հայաստանի և Ընդհանուր աշխարհագրութեան մի որ և է դասագիր, և կնձ առաջին և երկրորդ բաժանմունքների համար Տարրական թուաբանական խնդրագիր։

Մեր ս. էջմիածնի ճեմարանը, թեմական դպրոցները, Պարսկաստանում եղած և լինելի երկսեռ ուսումնարաններն ինչով են կառավարուել վերջին տարիներս և ներկայումս։ Յաճախ դպրոցական զանազան հաստատութիւններից զիմուներ են եղել և լինում են գրավաճառանոցներին, դասագրեր են պահանջում, բայց միշտ էլ յուսախաբ բացասուել են՝ չը լինելու պատճառով։

Հրապարակի վրայ ծախու չը կան բոլորովին.—Մեղք. արքեպս. Մուրադեանի և Յուս. վրդ. Մովսիսեանի «Եկեղեցական պատմութիւնները», Սեդ. Մանդինեանի «Նահապետական և հայրենի աշխարհ», «Դիւցազնական աշխարհ» և Հէնչէլի՝ «Բանաւոր և գրաւոր հաշուելու խնդիրներ» ա. բ. և գ. մասերը, Կ. Կոստանեանի «Գրաբարի հոլովումն և խոնարհումը», իսկ «Նախաշաւիղը» սպառուելու վրայ է, Աբրահամեանի պատկերազարդ «Հայոց պատմութիւն» ստորին դասարանների համար, Ստ. Պալասանեանի և Նիկ. Մելիք-Թանգեանի «Աշխարհաբար քերականութիւն», Ն. Սիմէօնեանի «Ընհանուր աշխարհագրութեան» ա. բ. և գ. մասերը, «Բաղդատական աշխարհագրութիւն», Գր. քահ. Երզնկեանի «Թուաբանական խնդիրներ և օրինակներ, տարրական դասընթացը» ա. և բ. տարի, Մ. Սիմէօնեանի «Դասագիրք թուաբանութեան, թուաբանական խնդիրների մ. ա. ամբողջ թուեր և մ. բ. կոտորակներ», Յ. Գէորգբէգեանի «Ժողովածու թուաբանական խնդիրների» մ. բ. կոտորակներ, Եղ. քահ. Երզնկեանի «Դասագիրք հայկական ձայնագրութեան և ազգային ձայնագրեալ երգարան», Կամսար Տէր-Դաւթեանի «Русское Слово» ձեռնարկը, արժանագին (5—10 կոպ.) փոքրածաւալ այբբենարան, կտրտուած-չարժական տառերի հաւաքածու կարգոնի վրայ, թղթէ արկղիկներով, միւնոյնը՝ քառակուսի փայտեբի վրայ յարմարեցրած և Հայաստանի քարտէզը։

Միջնակարգ դպրոցների բարձր դասարանների ուսանողները պակաս նեղութիւն չեն կրում Խորենացի, Եզնիկ, Նարեկ,

Ղազար փարպեցի և այլն գրաբար ձեռնարկները ձեռք բերելում: Շատ դասարաններում 4—5 հոգի մի գրքով են կառավարում: Յիշեալ դասագրերից խորենացին, Ագաթանգեղոսը և Եղիշէն տպագրուել են Թիֆլիսում. խորենացին սպառուած է, իսկ միւսները վենետիկի տպագրութիւններ են, բայց մինչև գրանց ստանալը աւելի շուտ ուսումնական տարին է վերջանում, քան այդ գրքերը՝ վենետիկից տեղ են հասնում:

Հայ գրավաճառները միանգամայն անուշադրութեան են տուել վենետիկի և վիեննայի Մխիթարեանների, Կ. Պօլսի, Զմիւռնիայի, Երուսաղէմի, Մոսկուայի և այլ տեղերի հրատարակութիւնները, որոնց չը լինելը սակաւ մտատանջութեան չէ ենթարկում գրականութեամբ զբաղուող չանձերին, երբ գրանք ձեռնարկում են մի որ և է աշխատութիւն գրելու և գրա վերաբերեալ աղբիւրներ չեն կարողանում գտնել:

Ահա ինչ ողորմելի դրութեան մէջ է մեր հրատարակչական և գրավաճառութեան գործը:

Խ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Մ Գ Ր Ք Ե Ր

- 1) Ի. Պօտապենկօ, Ֆարաջաւոր ուսանողը. Թարգմ. Գ. Աղաջանեանց. Թիֆլիս. 1900 թ. գինը 15 կոպ.:
- 2) Հաշիւ Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցւոյ երեցփոխ Ս. Յարութիւնեանցի. Բաթում, 1901 թ.:
- 3) Ахмедъ-бекъ Агаева, Женщина по исламу и въ исламѣ. Тифлисъ, 1901, цѣна 30 коп.
- 4) Линцбахъ, Универсальная стенографія, усваиваемая въ 2 дня, Москва, 1901 г. цѣна 50 коп.